

ԿԱՐԵՎՈՐ ՍԿՁԲՆԱԴԲՅՈՒՐ  
ՍԱՀՄԵՂԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԵՐԳԵՑ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դարեր շարունակ Հայ ժողովրդի պատմությունն ուղեկցվել է օտար լծի դեմ պայքարով, ջարդերով և բռնի կրոնափոխություններով: Մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում կրոնափոխ համաձայնագրերը, որոնց դեռևս XIX դ. անդրադարձել են Հայ և օտար մի շարք դիանականներ՝ Ղուկաս վրդ. Ինճիճյանը<sup>1</sup>, Մինաս վրդ. Բժշկյանը<sup>2</sup>, գերմանացի գիտնական Կարլ Կոխը<sup>3</sup>, Սարգիս Հայկունին<sup>4</sup>, Պ. Թումայանցը<sup>5</sup> և այլոք: Այս թվարկումը, թերևս, պետք էր սկսել Վենետիկի Մխիթարյան միաբանությունից: Պողոս վրդ. Մեհերյանով, որը Համաձայնագրի ինքնակազմում եղել է դեռևս 1776 թ. և իր «Պատմություն վարուց ...» հուշագրության մեջ խիստ կարևոր տեղեկություններ է հաղորդում: Թեև հուշագրությունը հայագիտության համար ունի բացառիկ արժեք, բայց ցայսօր մնացել է անտիպ:

Հ. Պողոս վրդ. Մեհերյանը ծնվել է Մշո Առինճ գյուղում 1729 թ., քահանայացի է 1767-ին<sup>7</sup>: Մխիթարյանների մատենադարանի համար ձեռք է բերել արժևքավոր ձեռագրեր<sup>8</sup>: Եղել է Եվրոպայի (Հունգարիա, Գերմանիա,

<sup>1</sup> Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. Աշխարհագրությունը չորից մասանց աշխարհի. մասն առաջին. Հ. Ա. Վենետիկ, 1806, էջ 396-397:

<sup>2</sup> Մ. Բ ժ շ կ ե ա ն. Պատմություն Պոնտոսի, որ է Սեաև ծով. Վենետիկ, 1819, էջ 92-93, 97:

<sup>3</sup> K. K o c h. Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, II, Reise im pontischen Gebirge und türkischen Armenien. Waimar, 1846.

<sup>4</sup> Ա. Հ ա յ կ ու ն ի. Նշխարներ, կորած ու մոռացված Հայեր (Տրապիզոնի Հայ-մահմադարանի գրադարանի ու նրանց առանձինությունները).- «Արարատ», Վաղարշապատ, 1895, № 7, էջ 239-243, № 8, էջ 293-297: Ա. Հ ա յ կ ու ն ի. Տէր Կարապետ քահանայ Թորոպլյու.- Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատասիրություններ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 702-709: Ա. Հ ա յ կ ու ն ի. Յուսէփի աղգատում և տարրինակ աւաղակ Արրիբոմ Տրապիզոնի Հայ գիւղերու մէջ, 1795-1840. Վաղարշապատ, 1905, էջ 5-8:

<sup>5</sup> Պ. Թ ու մ ա յ ե ա ն ց. Պոնտոսի Հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի.- «Առաջ», Տփլիս, 1899, յուլիս, էջ 174-177:

<sup>6</sup> Պատմություն վարուց Տեառն Հ. Պողոս վարդապետի Մեհերյան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղաղարու (այսուհետև՝ Պ. Մ ե հ ե ղ ա ն). Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 560:

Մխիթարեան յոբելեան 1701-1901. Վենետիկ - Ս. Ղաղար, 1901, էջ 218:

<sup>7</sup> Բ. Ս ա ղ զ ի ս ե ա ն, Գ. Ս ա ղ ք ս ե ա ն. Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. Հ. Գ. Վենետիկ, 1966, էջ 1-49: Ա. Ճ ե մ ճ ե - մ ե ա ն. Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. Հ. Գ. Վենետիկ, 1993, էջ ԺԹ-Ի: Հ. Պողոսը 1775 թ. մի շրջիկ մանրավաճառ (փերեզակ) տիրացուի հանձնարարում է դավառներում իր համար ձեռագրեր գնել: Տիրացուն Համաձայնում իջեցնում է 60 տարի առաջ բռնի մահացողներին ընդունած մի Հայի տանը, ուր տեղեկանում է, որ տանտերը ամեն շաբաթ երեկո ի պատիվ նախնիներից ժառանգած Ավետարանի (իրականում՝ Մաշտոցի) կանթեղ է վառում: Տիրացուն բաղում թախանձանքներով գնում է այդ մեծագիր մատյանը, որն էլ Հ. Պողոսը ուղարկում է Վենետիկ: IX-X դդ. թվա-

Հոլանդիա, Իտալիա և այլն) և Արևելքի (Թուրքիա, Եգիպտոս, Սիրիա և այլն) մի շարք երկրներում, մինչևիսկ հասել է Հնդկաստան և այդ ամենի մասին կենդանի ոճով պատմել է 1811 թ. 82 տարեկանում դրած իր, հիրավի, բացառիկ արժեքավոր հուշագրություն մեջ: Պ. Մեհերյանը մահացել է վեներիկի Ս. Ղազար կղզում 1814 թ. վետրվարի 26-ին՝ 85 տարեկան հասակում: Թեև Ղուկաս Ինճիճյանն իր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» աշխատության Ա հատորը հրատարակել է 1806-ին, այսինքն, ավելի վաղ, քան Մեհերյանն է իր հուշագրությունը գրել, բայց, համարելով Համչենի ինկալ գյուղի մասին նրա և Ինճիճյանի հաղորդածները, կարելի է ենթադրել, որ տեղեկատվության աղբյուրը (գուցե բանավոր) Պողոս Մեհերյանն է: Ղուկաս Ինճիճյանն իր գրքի «Հէմչիբէ կամ Համչէն» բաժնում գրում է. «Ինկալ: Գիւղ իբր 8 ժամավ հեռի ի Համչէնէ, և իբր 3 ժամավ ի Խոտրջրոյ ի հիւսիսակողմն նորա, կառուցեալ ի լանջակողմն բարձր լերին. բնակիչք նորա առհասարակ տաճիկք իբրև 200 տունք դարձեալք յազգէս հայոց. և իբր 5 կամ 6 տունք մնացեալք ի հայոց. գտանի ի սմա մեղր ընտիր: Անցանէ առ նովաւ Պէժանկետ վտակ, որ խառնի ի ձորոխ»<sup>10</sup>:

Պողոս վրդ. Մեհերյանից մոտ յոթ տասնամյակ անց՝ 1843–1844 թթ. Բարձր Հայքում և Ճորոխի ափագանում է լինում Ենայի և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր, նշանավոր գիտնական Կարլ Կոխը: Ըստ նրա՝ ինկալը, որը մտնում էր Բերդազրակ գավառի մեջ, «կը կազմվի հինգ թաղեր (կամ դուղամասեր) և ունի իբր 200 տուն՝ 1000 մինչև 1200 բնակչով»<sup>11</sup>: Կոխը ինկալում մեծամասնություն կազմող մահմեդականների հետ հիշատակում է նաև հույն և հայ քրիստոնյաների. «Այսօր տակավին միայն երկու գյուղեր (Կարմիրք և Խոտրջուր) հայ-կաթոլիկյա քրիստոնյաներն մինակ բնակյալ են. մինչդեռ չորս ուրիշ գյուղերու մեջ (Կուտորաշեն, Նիխաղ, Մոխրկուտ և Ինկալ) հույն և հայ քրիստոնյաներ մահմետականաց մեջ կը բնակին»<sup>12</sup>:

Հ. Հակոբոս Տաշյանը, որը քաջածանոթ էր Բարձր Հայքին և Ճորոխի ափագանին, գրում է. «Եթև արդեն Բերդազրակի մեջ հավանորեն կային, ինչպես ի Թորթում վրացածես հայեր. անշուշտ փոքր թիվ մ'ալ բուն վրաց կամ քրիստոնյա լազերու: Եւ թերևս ավելի ասոնց մնացորդներն համարելու ենք այն այլևայլ «յոյնք» որ կը հիշվին հոս հոն նաև ժամ. դարու սկիզբը. թեև աննշան թվով, որոնք այսօր անհետ եղած են, քան թե հարազատ հույներ, թեև ասոնցմե ալ այլևայլ տներ կրնան գտնված ըլլալ՝ որևէ առթիվ հաստատված»<sup>13</sup>: Ի դեպ, Մեհերյանը ևս հիշատակում է մի

գրվող այս տեսակիցր ցայսօր հայանի ամենահին Մաշտոցն է (տե՛ս Բ. Ս ա ռ - գ թ ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 4-5, Ս. ճ ե մ ճ ե մ ս ա ն. նշվ. աշխ., էջ 114-115): Գր. Ս. Ա Մաշտոցը. - «Բաղմավես», 1949, № 5-6, էջ 114-115):

<sup>9</sup> Մխիթարիան յորելեան, էջ 218:

<sup>10</sup> Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 397:

<sup>11</sup> Տե՛ս Հ. Յ. Տ ա շ ե ա ն. Տաշք. գրացիք եւ Խոտրջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրություն (այսուհետև՝ Յ. Տ ա շ ե ա ն. Տաշք ..., Հ. Բ). Հ. Բ, Վիեննա, 1980, էջ 218:

<sup>12</sup> Յ. Տ ա շ ե ա ն. Տաշք ..., Հ. Բ, էջ 281:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 214-215:

վրացի քահանայի, որը հովվում էր «պղիզ մի մերձ Խէւակայ, որք յունաց գաւանութեամբք էին»<sup>14</sup>:

Խնակի մերձակա լեռների սառնաշունչ բնության Մեհերյանի՝ համառոտ, և Կոխի ընդարձակ նկարագրությունները ևս ընդհանրություններ ունեն: Մեհերյանը Խնակում է եղել սեպտեմբերին և դրում է, որ այդ դարհուրելի ձյունապատ լեռներով արդեն հոկտեմբերին «ոչ ոք կարէ անցանել»<sup>15</sup>: Կոխը նույն վայրերում եղել է օգոստոսին և գեղարվեստորեն է պատկերում ամռանն անհարիր ցրտաշունչ համայնապատկերը. «Սառուցյալ հով մը կը փշեր, երբ վերջապես երկրորդ անգամ Պոնտական լեռանց բարձունքն հասանք. Խնակի լեռան բարձունքն այնտեղն, ուրկե երեկ անցած էինք, մեր ներքեը կ'իյնար տակավին. մեղմե վեր կը բարձրանային միայն սեպտոր, փլածներե կազմված քարակույտեր և կամ հաղթ, մեծագանգված հավիտենական թանձր սառուցցով ու ձյունով ծածկված սարագլուխներ, Հելուետիո կատարներուն ոչ աննման: Հազիվ 100 ոտք վերը կը սկսեր ձյան շրջանակը, ուր բյուրավոր դարերե վեր սառած ջրույն յուր ծորելի կերպարանը նորեն տալ չի կրնար արեւու որևէ ճառագայթ: Որչափ ալ մերթ ընդ մերթ ցրտության սարսուռ մը դողացներ մարմինս, եյա մագլելով բարձունք մ'ալ. և արդեն ցանցառ բուսականությունը հանկարծ դադրեցավ: Չախ կողմ կ'իյնար յայն Քաջբար, որուն կատարը չէի կրնար տեսնել մոտ բլլայուն, և աջ կողմն անկե թերևս բիշ մ'ավելի ցած լեռ մը Ան ծովու և ճարտի միջև ջրաբաշխ եղող այս հազիվ լեռան թիկտեղ վրա կը հանգչեր: Առջևս, ոտքերուս ասկը խորունկ կեցած էին ամպերը, որոնցմե միայն քանի մը գազաթներ ավելի վեր կը բարձրանային: Այսպես նաև այս անգամ բախտ չունեցա՝ ուղղակի ճամբով թերևս հազիվ 8 ժամ միայն հեռու ծովը տեսնել»<sup>16</sup>:

Խնակ գյուղն իր «Տեղագիր Հայոց Մեծաց» գրքում հիշատակում է նաև Դևոնդ Ալիշանը, սխալմամբ նշելով, թե Համչենի վիճակը «էրզրում նահանգ»-ի կազմում է<sup>17</sup>, գրում է, որ Համչենը հարուստ է մեղրով և որ «րնակիչք նորա Հայք ի կէս անցելոյ գարուն դարձան յորէնս Մահմետի, այլ ցարդ պահեն պանուանս և գտովորոյթն Հայոց: ... Անուանի պեղք Համչինու՝ Խէւակ յոտս Խաչէքարայ»<sup>18</sup>: Թեև Ալիշանը հղում չի անում, բայց այն, որ նա կարդացել է Մեհերյանի ձեռագիրը, իմանում ենք նրա «Սիսուան» աշխատությունից: Պեյլանի մասին պատմելիս Ալիշանը գրում է, որ «մի ոմն ի հարց մերոց յամի 1773 օթեվանեալ աստանօր»<sup>19</sup>, այս մի հատված է ներկայացնում Մեհերյանի հուշագրությունից և տողատակում նշում. «Հ. Պողոս վ. Մէհերեան յԱսինճ գեղջէ Մշոյ»<sup>20</sup>, առանց որևէ ծանոթագրության, թե երբ է ապրել Մեհերյանը և ինչ ձեռագիր կամ տպագիր

<sup>14</sup> Պ. Մեհերյան, էջ 168–169.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>16</sup> K. Koch, նշվ. աշխ., էջ 100–101, Յ. Տաշեան, Տայք ..., հ. Բ, էջ 89–90: Խոտորչուից Խնակ Գ. Կոխի ճանապարհորդության ընդարձակ նկարագրության մի հատված էլ տես Յ. Հուրուեանի Մ. Հաճեան. Յուշամասեան Խոտորչուրի. Վիեննա, 1964, էջ 96–98:

<sup>17</sup> Լ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855, էջ 36–39:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 39.

<sup>19</sup> Լ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ – Ս. Ղաղար, 1885, էջ 420:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 421:

աղբյուրից է արված այդ ընդարձակ քաղվածքը: Սա, թերևս, մեզ ծանոթ տպագիր աղբյուրներում է. Պողոս Մեհերյանի անվան առաջին հիշատակությունն է:

Ղ. Ինճիճյանից մեկ դար անց՝ 1907 թ., Մխիթարյան մեկ ուրիշ միաբան՝ Հ. Ս. Էփրեկյանն իր «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանի» երկրորդ հատորում մեծապես օգտվելով Ղ. Ինճիճյանից, մասամբ նաև Ալիշանից, գրում է. «Խեակ. գյուղ Համշենի. գրեթե երեք ժամ խոտրջրեն և ութ ժամ Համշենեն հեռու. կառուցված է բարձր լեռան մը լանջին վրա: ԺԸ դարու կիսուն գյուղիս Հայ բնակիչներեն 200 տուն թրքացան. կան նաև սակավաթիվ կաթողիկե Հայեր: Ընտիր է գյուղիս մեղրը»<sup>21</sup>: Ինչպես դժվար է նկատել, միակ նորությունը ինչպիսի հայերի կաթողիկե լինելու հանգամանքի հիշատակումն է:

Պողոս վրդ. Մեհերյանի ձեռագիր հուշագրությունն առաջինն արժևորում է Բարսեղ վրդ. Սարգիսյանը, որն իր «Ուսումնասիրութիւն մանիքէա-սլաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր.Նարեկացւոյ թուղթը» գրքում վերապատմելով Հալեպից Կարին ճանապարհին 1773 թ. Պ. Մեհերյանին հանդիպած աղանդավոր Հայերի («Որոնք աղանդավորք էին իբրև զթոնրակեցիս, կամ Կեսկես էին կամ Արևորդիք»)՝<sup>22</sup> և բոռճիմասուրցի կեղծ Հովհաննես եպիսկոպոսի պատմությունները<sup>23</sup>, նշում է, որ Պ. Մեհերյանը «Խեակ գյուղին մեջ 200 թուրքացած Հայ ընտանիքներ կը հիշէ» և սողատակում գրում է. «Այս անտիպ գրությունս, որ այժմ կզանկի

<sup>21</sup> Ս. Էփրեկյան. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան. հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 167: Ի դեպ, Ս. Էփրեկյանը ինչպիսի նախորդող ինչ բառահոգով գրում է. «Գյուղ Արտանուշի գավառին մեջ. մեկ տուն Հայ և 23 տուն թուրք բնակիչներով: Այս անվամբ երկու գյուղ ալ կա Արտանուշ գավառի մեջ»: Խեակի մասին իր տվյալները հավանաբար Ս. Էփրեկյանից է քաղել Համշենցիների ազգագրության լավագույն դիտակներից մեկը՝ Բարունակ Թուրքյանն իր ուսումնասիրության «Համշենի շրջան» բաժնում գրելով. «Խեակ. Համշենից ութ ժամ հեռու դեպի խոտրջրուր, բարձր լեռան վրա հիմնված, մահմեդականացած Հայերով բնակեցված գյուղ: Հայտնի է այս շրջանի մեղրը», տե՛ս Բ. Թ ո ու լ ա ք յ ա ն. Հայ ազգագրություն և բանահյուսություն. - Նյութեր և ուսումնասիրություններ. №13, Համշենահայերի ազգագրությունը. Երևան, 1981, էջ 29: Գրքում գետնոված «Համշենահայեր և սյունահայեր (բնակավայրերի մոտավոր սիմետրիկ քարտեզ քառ 1915 թ. վիճակի)» քարտեզում (հեղ. Բ. Թ ո ու լ ա ք յ ա ն) առանց աղբյուրը հիշատակելու ինչպիսի գյուղը նշված է Համշեն գավառի տարածքում՝ Պարիարյան լեռնաշղթայի արևմտյան լանջին:

Խեակ գյուղը ուսական քարտեզներում նշված է ինեի, իսկ 10 վերստանոց քարտեզում՝ ինչ անուններով: Ըստ բառարանի՝ ինչ անունով մի գյուղ է եղել նաև Բաթումի մարզի Արգվինի օկրուգի Արտանուշի շրջանում, երկու գյուղ էլ՝ Կարսի մարզի Արգահանի օկրուգում (Թ. Հ ա կ ո ք յ ա ն, Ս. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀԾՏԲ). հ. II, Երևան, 1988, էջ 720):

<sup>22</sup> Բ. Ս ա ր գ ի ս ե ա ն. Ուսումնասիրութիւն մանիքէա-սլաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը. Վենետիկ - Ս. Ղազար, 1893, էջ 102: Մեհերյանի ձեռագրի էջ 118-ում «Հայերէն խօսէր շինական ե. ընտանիք իւր. բայց աղանդաւոր էր իբրև զթոնրակեցիս. կամ կէս կէս էր. ե կամ արեւորտի»:

<sup>23</sup> Բ. Ս ա ր գ ի ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 102-104: Բ. Սարգիսյանի գրքում Հ. Պ. վրդ. Մեհերյանից մեջբերված վկայություններին են անդրադարձել՝ F r e d . C . C o n y - b e a r e . The Key of Truth, a manual of the Paulician church of Armenia. Oxford, 1898. p. lxxi-lxxii. Կ. Տ ե ր - Մ կ ր ա չ ե ա ն. Պաղկիկեանց և թոնրակեցուց ապանյները արդի քննադատութեամբ. - «Արարատ», 1900, №15 (յուլիս), էջ 33, Վ. Գ ր ի ր ո յ ա ն. Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Հովհաննես երեցի մասին. - «Բանբեր Մատենադարանի». 1960, №5, էջ 335, 338-341, տե՛ս նաև Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի. հ. Բ, 1786-1792, Երևան, 2003, էջ LXXXIII, Ա. Ղ ա զ ա ր յ ա ն, Ռ. Ն. Լ ե ո ն յ ա ն. Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս). Երևան, 1999, էջ 42-43, 51:

մեր Չեռագրատան մեջ, շատ և շատ հետաքրքրական և կարևոր նյութեր կը պարունակե ժամանակակից պատմության և Հայոց հանժամու կացութ-  
յան վերա»<sup>24</sup>:

Բ. Սարգիսյանը Պ. Մեհերյանի հուշագրությունը վկայակոչում է նաև հետագայում, «Բաղմավեպում» տպագրված իր «Վիճակագրական նոր տեսություն մը ի նպաստ անկախ Հայաստանի» հոդվածում նա վերապատմում է Համչենի իսկական գյուղում կրոնափոխ Հայերի հանդիպման պատմությունը. «Իսկ Հ. Պողոս Վ. Մեհերյան, որ ինճիճյանեն 30 տարի առաջ, այն է 1776-ին՝ ճանապարհորդած է Համչեն, իր ինքնակենսագրության մեջ շատ կենդանի դուլնով կը նկարագրե ղավառիս իսկական գյուղին մեջ և շրջարևակ գյուղերու տաճկացած իր արյունակիցներեն դտած անսովոր ընդունելությունը և մեկ սրտաճմլիկ տեսարանը: Հոս ուրացյալ ժողովուրդը լսելով, որ եկավորն քահանա է, չորս կողմը խոնված աջը կը համբուրեին. և իր ուղեկից քահանային շարժական սեղանին վրա պատարագած ժամուն՝ ամենքն ալ ծնրադիր մտիկ կ'ընեին. ուստի գուշակեց, թե անոնք հայությունեն դարձած են, բայց ոչ մոռցած դայն. փնտոեց և գտավ եկեղեցին ևս, որ ողջախոհ ալրի մը պես իր ուրացյալ որդվոցմե թողված օրեն ի վեր՝ թեև փակ, բայց կը մնար անարատ: Բանալ կու տա դանի, կը լվա կը սրբե. և Ս. Խաչին տոնը իր ուղեկից չորս նորընծա քահանաներով ցայդապաշտոն ընելեն ետքը՝ ձայնավոր պատարագ մ'ևս կը մատուցանե:

Ի ձայն խորհուրդ խորին խորհրդավոր երպին կ'արթննա ուրացյայնե-  
րուն իրիզը, կը հիշեն իրենց պապերու և մամերու հավատքը, և խուսնըն-  
թաց կ'ուզեն ներս մտնել: Սա կ'ուղե արգիլել անոնց մուտքը. բայց ի  
գուր: Ավետարանի ժամանակ, կը մեկնե զանի, հագարացվոց լեզվով,  
շրջակա գյուղերեն հոն եկող ժողովրդյան, հիշեցնելով իրենց նախնայաց  
սուրբ կրոնքն և կրոնական պարտքերը: Եվ ապա սաստիկ զգացված կը  
փութա մեկնիլ անտի, զի հալածանաց ժամանակ ըլլալով կրնային ձերբա-  
կալել զինքը՝ իբր փռանգ»<sup>25</sup>:

Բ. Սարգիսյանի վերապատմածը համեմատելով Պ. Մեհերյանի ստորև  
հրատարակվող բնագրի հետ, դժվար չէ նկատել, որ նա առավելապես գրա-  
կան հրկերին հատուկ ոճով ու համեմատություններով է ներկայացնում  
հիշյալ հատվածը, երբեմն էլ շեղվում է կամ անհարկի հավելումներ ա-  
նում, գրելով, որ Հ. Պողոսն Ավետարանը մեկնում է «հագարացվոց լեզ-  
վով», այսինքն՝ արաբերեն<sup>26</sup>, ինչը պարզապես չի բխում բնագրից և իսկա-  
կի ու շրջակա գյուղերի հայերի արաբախոս լինելու մասին անհիմն  
հետևությունների տեղիք կարող է տալ: Գրում է, որ Հ. Պողոսը իսկակից  
չտապով հեռանում է, որովհետև վախենում է, որ իրեն կձերբակալեն իբրև  
«փռանգ», այսինքն՝ կաթոլիկ, այնինչ Հ. Պողոսի փութալը կապված է ոչ  
թե նրա կաթոլիկ լինելու հանգամանքի, այլ իրապես վտանգավոր իրո-

<sup>24</sup> Բ. Սարգիսյան. նշվ. աշխ., էջ 102.

<sup>25</sup> Բ. Սարգիսյան. Վիճակագրական նոր տեսություն մը ի նպաստ անկախ Հայաստանի - «Բաղմավեպ», 1919, №9, էջ 284-285: Հ. Բարսեղ վրդ. Սարգիսյանի վերապատմածը 1992-ին առավել հակիրճ շարադրել է պատմաբան Սա. Պողոսյանը, տես Ստ. Պողոսյան. Սև ծովից Վանա ծով, հինգ ամիս հինգ օր. Երևան, 1992, էջ 22:

<sup>26</sup> Նոր բառգրքը Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). Հ. Բ., Վենետիկ, 1837, էջ 2: Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան. Հ. 3, Երևան, 1974, էջ 250:

ղովթյան հետ վարդապետի կողմից մահմեդականներին քրիստոնեության դարձնելը՝ «հայացուցանելը»։ Ինչպես հայտնի է, Սամանյան Խուրբիսյունը մահապատժի արժանի հանցանք էր համարվում։

Հ. Տաշյանը, որն իր «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին»<sup>27</sup> գրքում և «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» եռահատոր աշխատության<sup>28</sup> առաջին և, հատկապես, երկրորդ հատորներում քանիցս անդրադարձել է Խեղեղին, ցավոք, տեղյակ չէ Մեհերյանի հուշագրության մասին, թեև, ինչպես արգեն նշել ենք, Բ. Սարգիսյանն իր «Ուսումնասիրութիւն մանիքէա-պաղղիկեան թոնրակեցիներու աղանդին ...» գրքում և «Վիճակագրական նոր տեսութիւն մը ...» հոդվածում հիշատակում է Մեհերյանին և նրա հուշագրության մեջ հանդիպող Խեղեղի գյուղը, այլապես շատ հարցերի պատասխաններ Տաշյանը կարող էր տալ Մեհերյանի օգնութեամբ։ Հ. Տաշյանն իր ուսումնասիրության «Խեղեղի մահմեդականացումը» բաժնում գրում է. «Դժբախտաբար այս գավառիս մահմեդականացման մասին մանրամասն տեղեկութիւններ չունինք, գոնե մեզի ծանոթ չեն։ Էականն անշուշտ հաղորդած է Ինճիճյան, այլևայլ դիտողութիւններ կու տա նաև Քոխ։ Բայց ամենը միայն այսչափ է»<sup>29</sup>։

Կրոնափոխութիւններից մոտ երկու դար հետո էլ խեղեղիների Հայախոս լինելու մասին կարևոր վկայութիւններ ենք գտնում Հ. Տաշյանի աշխատութիւններում։ Նա 1910–1911 թթ.<sup>30</sup> ճանապարհորդելով Սեւ ծովից Կարին, դրում է, որ «հաճախ հարցափորձած ենք — մեր ուղևորությանց ատեն — զործածված այս կամ այն հայ բնակչու, իրր անդեա մեկնութիւն խնդրելով գիտմամբ, և նկատած որ ասոնց շատերուն խուրք համապարտներն անծանոթ էին շատերուն։ «Իրենց գյուղն այսպես կ'ըսեն» այս էր ամեն մեկնութիւն հանկերգը։ Ոչ սակավ անդամ նշմարած ենք որ այն հին մահմեդականացածները, որոնք այնպես կը վարվին իբր թե թուրքերենն զատ ուրիշ լեզու չեն գիտեր, լիովին կը հասկնային Հայերենը (օր. Խեղեղիք)»<sup>31</sup>։ «Այսօր ալ Խեղեղիք, կամ գոնե շատը Հայերեն գիտեն կամ կը հասկնան թեև օտարի հետ (արական սեռը) թուրքերեն կը խոսին։ Մահմադականք սակավին պահած են առհասարակ Հայ մականուններն ալ (օր. «Կեղիչ-օղլու, Մակար-օղլու, Մինաս-օղլու» ևն, ևն)»<sup>32</sup>։ «Այս մահմեդականք այսօր ալ կը հիշեն իրենց ազգակցութեան և խնամութեան կապերն այն քրիստոնյա ազգակցաց հետ, որոնք շատոնց հետսպած ու գաղթած են այլուր՝ գլխավորաբար կրոնական բռնութենէ ազատ մնալու համար։ Տողերուս գրողն առիթ ունեցած է ի Կարին ճանչնալու քրիստոնյա ազգակցաց այցելութեան եկած մահմեդական Խեղեղիներ, որոնք Հայերեն գիտեին»<sup>33</sup>։ Ի դեպ, Հ. Հակոբ ծ. վ. Քոսյանի «Բարձր Հայք, Կարին քա-

<sup>27</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը. Վիեննա, 1921, էջ 81։

<sup>28</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Տայք..., հ. Ա, Վիեննա, 1973, հ. Բ, Վիեննա, 1980, հ. Գ, Վիեննա, 1981 (նախապիս սուրբովի է «Հանգես ամսօրյա»-ում, 1970, № 4–6-ում սկսելով ե 1975 թ. № 1–3-ում ավարտելով)։

<sup>29</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Տայք..., հ. Բ, էջ 216։

<sup>30</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Հայ բնակչութիւնը..., էջ 6։

<sup>31</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Տայք..., հ. Բ, էջ 150։

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 219։

<sup>33</sup> Յ. Տ ա շ յ ա ն. Հայ բնակչութիւնը..., էջ 81։

ղաբը»<sup>14</sup> գրքից տեղեկանում ենք, որ Կարինի քրիստոնյա խեղճներին պատկանող երեք արձանագրություններից երկուսում գյուղը հիշվում է խեղճ ձևով: Օրինակ կաթողիկե հայոց Ս. Ասավաճաճին եկեղեցում (կառուցված 1842 թ.)<sup>15</sup>, ձախ կողմի որմում սպիտակ մարմարի վրա փորագրված «Ցանկ մշտնջենաւոր Պատարագաց»-ում նշված է եղել «Խեղճիցի Գրիգորեան ուստա Սարգսի»<sup>16</sup> անունը, իսկ կաթողիկե հայոց գերեզմանոցում եղել են «Խեղճիցի Զորապեան Գրիգորին» (1871 թ.)<sup>17</sup> և «Խեղճիցի Պրնաւետիս Առաքելեան»-ի (1872 թ.)<sup>18</sup> տապանները: Գերեզմանոցի բոլոր տապանաքարերի վրա չէ, որ նշված է եղել հանգուցյալի որտեղացի լինելը, ուստի հնարավոր է, որ այլ խեղճիցիների գերեզմաններ էլ եղել են:

«Հայկական սովետական հանրագիտարանը» ևս անդրադարձել է խեղճ գյուղին. հեղինակը՝ Թ. Գևորգյանը, 200 տուն հայերի կրոնափոխությունը չգիտես ինչու վերադրում է XIX դ. առաջին կեսին, երբ Մեհերյանն ու մյուս աղբյուրները մատնանշում են XVIII դ. առաջին կեսը. «Խեղճ, հայաստան մահմեդական գյուղ Արևմտյան Հայաստանում, էրզրումի վիլայեթի Կիսկիմ գավառում, Քաջ(ք)ար-լեռան արևելյան ստորոտին, Կիսկիմ ավանից հյուսիս: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր մեղվաբուծությամբ (գյուղը հռչակված էր ընտիր մեղրով), հողագործությամբ, անասնապահությամբ: Խեղճի քրիստոնյա հայերը (մոտ 200 տուն) XIX դ. առաջին կեսին ստիպողաբար մահմեդականություն են ընդունել կամ փախել և ապաստանել Խոտորջրում ու Կարինում: XX դ. սկզբին գյուղում մնացել էին միայն 10 տուն հայ քրիստոնյա, որոնք 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ ընդունել են մահմեդականություն: Խեղճի մզկիթի վերածված հայկական եկեղեցին այժմ էլ կանգուն է»<sup>19</sup>: Ցավոք, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները ծանոթ լինելով այլ աղբյուրների, կրկնում են Թ. Գևորգյանին կրկնելով նաև նրա սխալը. «Խեղճ, Խեղճ, Խեղճ- գյուղ Արևմտյան Հայաստանում, էրզրումի նահանգի էրզրումի գավառում, Կիսկիմի գավառակում, Ճորոխի միջին հոսանքի ձախ կողմում, նրա Պարխալ վտակի ձախակողմյան Կորակսու վտակի ակունքների մոտ, Խաչեքար կամ Քաջքար լեռան արևելյան կողմում: Գյուղի միջով անցնող Լեժանգետ գետակը կոչվում է նաև Խեղճ գետ: XIX դ. սկզբին ուներ մոտ 200 տուն հայ բնակիչ և եկեղեցի, զբաղվում էին երկրագործությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ: Հայ բնակչության մեծ մասը XIX դ. առաջին կեսին բռնի մահմեդականացվելը, մյուս մասը հեռացավ գյուղից: XX դ. սկզբին գյուղում մնացել էր 10 տուն հայ բնակիչ»<sup>20</sup>:

Եթե իրապես, XX դ. սկզբին դյուղում կար նաև 10 տուն քրիստոնյա հայություն, ապա անհասկանալի է, թե ինչու Ա-Դոն, որը 1909 թ. ճանա-

<sup>14</sup> Թ. Ք օ ս ե ա ն. Բարձր Հայք, Կարին քաղաքը, տեղագրություն, պատմություն և սովորույթներ. Հ. Ա. Վրեննա, 1925:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 460.

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 461.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 479.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 479-480.

<sup>19</sup> Հայկական սովետական հանրագիտարան. Հ. 5, Երևան, 1979, էջ 47:

<sup>20</sup> ՀՀԵՏԲ, Հ. II, էջ 720:

պարհորդել է էրզրումի նահանգում<sup>41</sup> և Կարինի առաջնորդարանից քաղել է Կիսկիմի հայ բնակչության մասին տվյալներ, իր կազմած «Վիճակագիր Կիսկիմի գաւառի հայ ժողովրդի» աղյուսակում Կիսկիմի 68 գյուղերից առանձնացնում է հայ բնակչություն ունեցող միայն 6 գյուղ՝ Խոտորջուրը (իր 7 գյուղակներով կամ թաղերով), Կարմրակը, Գասապան, Փրթիկները, Նիխախը, Կուտրաչէնը, իսկ Խևակը չի հիշատակում, այն դեպքում, երբ 15 տուն ունեցող Գասապան և ընդամենը 7 տուն ունեցող Նիխախը նշված են<sup>42</sup>:

1907-ին հրատարակված «Պատկերագրող բնաշխարհիկ բառարանում» Ս. Էփրիկյանը, թվարկելով Կարնո հայաբնակ, թուրքաբնակ և խառը բնակչություն 278 գյուղերը<sup>43</sup>, դրանց շարքում չի հիշատակում Խևակը:

Ինչպես տեսնում ենք, Խևակի պատկանելության հարցում աղբյուրները տարակարծիք են. Պ. Մեհերյանը, Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիչանը, Ս. Էփրիկյանը, Բ. Սարգիսյանը, ինչպես նաև Բ. Թուլաքյանը և Ս. Պողոսյանը այն համարում են Համչենի գյուղերից մեկը, Կ. Կոխը, այնուհետև Թ. Գևորգյանն ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները՝ տեղադրում են էրզրումի նահանգի էրզրումի գավառի Կիսկիմ (Բերդադրակ) գավառակում: Հ. Տաշյանը Կիսկիմում տեղագրելով հանդերձ հնարավոր է համարում, որ երբեմն Համչենի սահմանը հասել է մինչև պոնտական լեռնաշղթայի հարավային լանջերը՝ ընդգրկելով նաև Խևակը. «Այսպես Ինճիճյան գիտակ կը դնե Համչենի մեջ իբրև ուրույն վիճակ մը, և յուր դիրքով կրնար այս հարմար իսկ նկատվիլ, թեև բուն Համչենե բաժնված է այնպիսի բարձր մշտնջենավոր ձյան լեռնաշղթայով մը, որուն անանցանելի ըլլալն այնպես պիտեցիկ նկարագրած է Գոթս»<sup>44</sup>: «Կ'երևա սակայն թե Համչեն երբեմն պոնտական շղթային հարավային երեսն ալ կ'իջնար»<sup>45</sup>: Թե որքանով է համոզիչ Տաշյանի ենթադրությունը, ցույց կտան հետագա ուսումնասիրությունները, իսկ առայժմ դիտական շրջանառության մեջ դնելու նպատակով քաղվածաբար ներկայացնում ենք Հ. Պ. վրդ. Մեհերյանի հուշագրության տարբեր էջերում սվուված և կրոնափոխ հայերի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցող հատվածները<sup>46</sup>: Հրապարակումը նաև տեղեկություններ է պարունակում Խոտորջրի XVIII դ. հոգևորականների վերաբերյալ: Մանրամասն ենք, որ Խոտորջրի կաթողիկոսացումը սկսվել է XVII դ. երկրորդ կեսից,<sup>47</sup> իսկ արդեն 1748-ին, համաձայն Կ. Պոլսից Վատիկան ուղարկված մի զեկուցագրի՝ Խոտորջրի «բոլոր գյուղերուն մեջ կան կաթ. հայեր մեկ կամ երկու քահանաներով, իրենց ազգեն»<sup>48</sup>:

<sup>41</sup> Ա - Դ օ. Վանի, Բիթլիսի եւ էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ V:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>43</sup> Ս. Էփրիկյան. Պատկերագրող բնաշխարհիկ բառարան. Հ. II, գիրք Ա. Վենետիկ, 1907, էջ 51, 300-301:

<sup>44</sup> Թ. Տաշյան. Տայք ..., Հ. Բ, էջ 197:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>46</sup> Բնագրից մի փոքր հատված հրատարակվել է՝ Ս. Վարդանյան. Համչենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից. - «Իրան-նամե», 1998, № 1-2-3, էջ 2: S. Vartanian. Des Armeniens oubliés. - "Azad magazine", Grenoble, 1999, № 3, p. 16.

<sup>47</sup> Թ. Հուլիսյան. Մ. Հաճախ. Յուզամատեան..., էջ 165:

<sup>48</sup> G. Hofmann. IL vicariato apost. di Constantinopoli. 1453-1830. Roma, 1935, p. 128-129, տե՛ս Յուզամատեան..., էջ 166:



Բնագիրը հրատարակելիս յուրաքանչյուր քաղվածքի սկզբում երկու գծիկով և փակագծի մեջ նշել ենք բնագրի համապատասխան էջը, բացել ենք հապավումները, հատուկ անունները սկսել ենք մեծատառով, մեծատառով ենք սկսել նաև ուղղակի խոսքը, ի նախդիրից առաջ դրված ապաթարց նշանը չենք վերարտադրել, բացահայտ գրչական սխալները տպագրել ենք ուղիղ տառով, բաց թողնված տառերը լրացրել ենք ուղղանկյուն փակագծերի մեջ, սուրանկյուն փակագծով նշել ենք բառի կրկնությունը, կետադրությունը նշանակել ենք ներկայումս գործող կանոնների համաձայն:

II(161) «...բերին Բ. (2) տիրացու ի Կարմիրդ<sup>49</sup> գեղջէ և տիրացու մի ի Մոխրակոյտ<sup>50</sup> գեղջէն և զայլ ոմն տիրացու Աէրօբէ ի Համամաշէն<sup>51</sup> գաւառէն, ի ինչվակ գեղջէն: Կարմրցիք քահանայն և ժողովուրդք, և մոխրակուտացիք ի ժողովին վկայեցին վասն տիրացուաց իւրեանց, իսկ ինչվակցի Աէրօբէին ոչ գոյր ի գեղջէ իւրմէ վկայ և ոչ մի: Ուստի խոտրջրոյ<sup>52</sup>՝ ձերագոյն քահանայք այսպէս վկայեցին, թէ մինչ ինչվակցիք թուրքացան, էին անդր 5 և կամ 6 տունք ուղղափառք, զորս խոտրջրոյ քահանայք հովուէին գնալով գալով. էր անդր ձեր ոմն, որ էր հայր այս տիրացու Աէրօբէին, և ի հիւանդանալն ձերոյն կոչէ զուղղափառ եղբարս ինչվակու առ ինքն և ասէ ցնոսա. Միրելի՛ եղբարք իմ, գիտէք զի յաւուրս մեր թուրքացան գիւղականք մեր 200 տունք, և ուղղափառ սուրբ հաւատք ողորմութեամբ Աստուծոյ զմեզ պահեաց, և ահա քահանայ չունիմք, և յետ այսորիկ երկնչիմ, զի մի որդիք մեր և ձեր կորիցեն առանց քահանայի: Ասեն ցնա. Հայր, զի՛նչ արասցուք: Ասէ ցնոսա ձերն թէ՛ Ահա զորդին իմ զԱէրօբէն իւր 9 ամաց է, տամ ձեզ ե 2000 դահեկան, զի զԱէրօբէս առաքեսջիք ի խոտրջրու՝ առ տէր Յակոբ մեծաւոր նոցա, մնալ անդր ե ընթիւնուլ ե ի հասանիլ ժամանակին բերջիք անտի II(162) ե ձեռնադրեալ տացջիք, զի մի՛ կորիցեն դաւակք մեր, որպէս կորեան գիւղականք մեր: Զայս կտակ արարեալ ձերունւոյն՝ վախճանի: Եւ նոքա զկտակ նորա կատարեալ են: Զայս ամենայն վկայեաց տէր Յովսէփ խոտրջրոյ մեծաւոր, ճիճապագցի<sup>53</sup> ձեր տէր Մարդար, ի Սիւնեաց<sup>54</sup> գեղջէն տէր Ալէքսան և տէր Կտրապետն, ի Կազմխուտայ<sup>55</sup> տէր Պօղօսն, ի Խանթաձորոյ<sup>56</sup> տէր Յօհաննէսն և այլն:

II(164)...Իսկ յաղագս երկու կարմրցի տիրացուացն և մոխրակուտցի տիրացուին և ինչվակայ Աէրօբէին վկայութեամբ քահանայից և ժողովրդոց սրինօք ձեռնադրեցան:

<sup>49</sup> Կարմիրդ [Կարմիրք] – Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ մտնող խոտրջրոյ գյուղախմբի գյուղերից (ուղղանկյուն փակագծերում նշված է գյուղի անունն ըստ Յ. Հունուրեանի և Մ. Հաճեանի «Ծուշամատեան...»-ի):

<sup>50</sup> Մոխրակոյտ – Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ մտնող խոտրջրոյ գյուղախմբի գյուղերից է. տե՛ս Յ. Հունուրեանի և Մ. Հաճեանի «Ծուշամատեան...», էջ 558:

<sup>51</sup> Համամաշէն, Համշէն – ավան և գավառակ Տրապիզոնի նահանգի Լագիստան գավառում:

<sup>52</sup> խոտրջրու, խոտրջրու – գյուղախումբ էրզրումի նահանգի Կիսկիմ գավառակում:

<sup>53</sup> ձիճապաղ – խոտրջրոյ գյուղախմբի գյուղերից:

<sup>54</sup> Սիւնեաց [Սիւնից]՝ նույնը:

<sup>55</sup> Կազմխուտ [Կախիխուտ]՝ նույնը:

<sup>56</sup> Խանթաձոր [Խանդաձոր]՝ նույնը:

II (167) Վասն գնալոյ իմոյ ի յԱրդուին<sup>57</sup>

ԳԼ. Ը-երրորդ

Յետ կատարելոյ գտօնախմբութիւն տիրամօրն ի խոտրչուր և յետ քանի ինչ աւուրց առի զնոր[ը]նծայ քահանայսն զմօխրակուտցի տէր Աւետիս և համամաշէնցի խէվակցի տէր Սէրօբէն և զճիճապազցի տէր Պետրոս և չոգայ ի Մոխրակոյտ, ուր տէր Աւետիսն հանգիստսպէս մատոյց զձայնաւոր պատարագն, և յետ պատարագին առեալ զժամարարն զգեստուք պատարագին, շարականաւ և ծնծղայիւք, ըստ ծիսից հայոց տանէաք ի տուն երգելով:

...Յետ այսորի[կ] իբր անցին աւուրք ինչ, առի ընդ իս գտէր Պետրոսն, զնոր[ը]նծայ տէր Աւետիսն և զհամաշէնցի տէր Սէրօբէն և չոգայ ի Համամաշէն ի զիւղն II(168) <ի զիւղն> խէվակ, բայց ի ճանապարհին ի գարհուրելի լերինս ձիւնապասս ելաք, և այնչափ սաստիկ ցուրտ էր և բուք, մինչ զի ամենեքեանս գրէթէ յուսահատեցաք ի կենաց: Իսկ ես ստիպեցի զնոսա ուտել, բայց սառուցեալ, քարացեալ էր միսն և մանաւանդ հալվէն էր իբրև զքարացեալ, ոչ կարէի ուտել: Եւ այն զի ի սեպտեմբեր ամսոյն էր, և ասէին թէ ի հոկտեմբերի ոչ ոք կարէ անցանել աստի, այլ ընդ ձորուի՝<sup>58</sup> գետն <գնա> զնալոց են ի խէվակ: Եւ յիջանելն մեր ի լեռնէ անտի գնացաք ի խէվակ, և մինչ մտաք ի զիւղն, արք և կանայք զեղջն, որք թուրքացեալք էին, յաջմէ և յահեկէ համբուրէին զաջն իմ, ուր իջեվանեցաք ի տուն նոր[ը]նծայ Սէրօբէին, որ ունէր հօրեղբարք, և շէն էին: Զառաջին ի տան սեղան կազմեցի և պատարագեցի ես, տէր Պետրոս և տէր Աւետիս, և զային ի տան տաճկացեալք՝ տեսանել պատարագ: Հարցի ցնոսա թէ՛ Գո՞յ ասա եկեղեցի, ասացին՝ Այո՛, գոյ, բայց աւերակ է: Եւ մինչ տեսի գեկեղեցին զիւրին էր կարկառեալ, խկոյն կարկառեցի, մարբեցի հինգ վեց սորամբք. և սպա զանշարժ վէժ սեղանոյն լուացի ջրով և զինեաւ, քանզի օծեալ էր և զուռն փակեալ էր, ոչ ոք մտեալ կամ ելեալ էր, սորին վասն օրհնեցի, և պատարագեցաք երեք [ք]ահանայքս: Եւ տես դու, զի ուրացեալքն ի ժամ պատարագին լնուին զեկեղեցին, և ոչ կարացի գաւազանաւ արտաքս վարել: Եւ զի երկնչէի, թէ գուցէ մատնեսցեն զիս այլազգեաց, թէ վարդապետս այս եկեալ է հայացուցանել զխէվակցիք: Իսկ յամսեանն սեպտեմբերի[կ] վառաւորապէս կատարեցաք չորիւք քահանայիւք զտօն մեծ իսաչին: Քանզի վրացի քահանայ մի, որում անուն էր տէր Իսրայէլ, որ հովուէր զգիւղ մի մերձ խէվակայ, սրք յունաց գաւանութեամբք էին. սոյն զուռնեցաւ զուղ[լ]ափառ հաւատաս, զոր արձակեցի և մուծի յեկեղեցին Քրիստոսի. սա կամէր փոխել զծէս իւր որպէս զմեզ յիմարապէս, և մանաւանդ զնշխարս: Բայց բազում բանիւ և օրինակաւ արգելի զնա ասելով ցնա, թէ դու կամիս զգիւղացիս քո ուղղել և մուծանել յեկեղեցին Քրիստոսի. և ի փոխելն II(169) <ի փոխելն> քո զծէս յունական այլևս ոչ կարես ուղղել զժողովուրդս գեղջ քո: Յետ այսորիկ խոստացայ նմա տալ զգեստ պատարագի և սկիհ ըստ ծիսի հոռոմոց: Եւ ասլա ի Գիմիշհանայու<sup>59</sup>

<sup>57</sup> Արդուին – քաղաք Ախալցխայի փաշայութեան համանուն զավառում, 1878-ից Բաթումի մարզի Արդվինի օկրուգի կենտրոնը:

<sup>58</sup> Չորուի, ձորուղ – Չորուի գետ Սև ծովի ավազանում, Տայքի ամենամեծ գետը:

<sup>59</sup> Գիմիշհանա – Գյումուշխանե համանուն զավառի կենտրոնը Տրապիզոնի նահանգում: Նույնանուն զյուզ կար նաև Բաթումի մարզի Արդվինի օկրուգում:

առաքելի նմա զգեսաս ըստ խոստման իմոյ ամենայն զարդուք: Իսկ յետ պատարագացն ըսա սովորութեան ազգիս շուրջալաւ<sup>60</sup> և խաչիւ ելեալ մեր յեկեղեցւոջ օրհնել զգերեզմանս ուղղափառաց, և ուրացեալքն գեղջն կո(ւ)սեցան ի վերայ մեր և սփռեցին զկերակուր ի վերայ գերեզմանաց հարցն իւրեան(ց), և ազաչէին զիս այս ոք և այլ ոք թէ՛ ե՛կ և օրհնեալ զկերակմանս նախնեաց իմոց, զի քրիստոնեայք էին: Իսկ ոմանք ողբային զանհաւատութիւնս իւրեանց և խոստովանիլ խնդրէին, մանաւանդ ծերք: Բայց քանի ինչ պառաւունք կանայք չէին ուրացեալ, որոց հարկաւոր մասունս հաւատոյ ուսուցի և արձակեցի, և յունձն արարի նոր(ր)նծայ տէր Աչորբէին հոգալ զնոսա: Ձիտորջրցի տէր Պետրոսն թողի ի Խէվակ, իսկ ես առի զնոր(ր)նծայ տէր Աչորբէն և չոգայ ի հանգրուանս նոցա, որ էր Հուրի ի Խեվակէն իբր ժամ մի, որ էր ի մէջ անդառախիս մեծամեծ ծառոց և բոսնի ինչ ապարակիք, ուր էին խաչինք, եղինք և կովք և մեղուց նոր(ր)նծային և փոքրիկ անակիկ մի, ուր իջեվանեցաք յայնմ գիշերին, և առաւօտն պատարագացաք Երկոքեանս, յետ պատարագացն խնդրեցին օրհնել զպարակս, զխաչինս և զեղինս: Յետ այսորիկ ճաշեցաք: Ապա պաշար ճանապարհին պատրաստեալ էին, եղին ընդ մեզ զ(ս)քանչելի մեղր սպիտակ իբրև զծիւն, և համեզ կողի:<sup>61</sup> պատուական պանիր և այլն: Եւ անախ յուղի անկեալ մեր իջաք ի լեռնէ անախ ի ձորն ի յայն ձորուղ գետոյն: Այս ձորուղ գետն անցանէ ի Բաբերգու<sup>62</sup> և զնայ անկանի ի մէջ լեռանց Իսպիրու<sup>63</sup> և լազից, և անցեալ գիսպիր, <Հատա> II(170) Հաասնէ զլերինս բարձունս և իջանէ մերձ Խոտորջրոյ, և անախ ի Փեթագրագ<sup>64</sup>, անախ ի յԱրդուին, և խոտորեալ յարևմուտս իջանէ ի Բաթմ<sup>65</sup>, ի Սեաւ ծովն: Եւ զնայաք առ ավամբ ձորուղ գետոյն, որ զարդարեալ էր այգևատանօք, ճիւղատանօք և պատուական պաղատու ծառովք: Վասնզի ես ծագաց ի ծագս շրջան ասի, լալց ոչ ուրեք այնպիսի ազնիւ պատու անախ և առտա: Ձի թօթափեալ էին պտուղ(ը)ք ի վերայ ճանապարհին, և ընդ ոտիւք անցաւորաց ճմլել էին, և իբրև ջուր շաղաղեալ էր շիրան պաղոց զճանապարհ, և մանաւանդ նոնոն<sup>66</sup>, այն զի մեծամեծ նոնենիք էին, որոց ոտքն խոռոնեալ ընդ միմեանս, և իմ նստեալ ի գրասա ընդ ծառովք գնայի, և մեծամեծ նոնք կախեսալ զծառոց հասեալ և հերձեալ և թօթափեալ ի վերայ ճանապարհին, առնոյի և ուտէի անուշ անուշ: Եւ ի հարցանելն իմ ցնոսա, թէ՛ Ընգէ՛ր թողուք կորնչիլ պատուական պտղոցք այգոցիք, ասէին՝ Հապա պի՛նչ արասցուք, ոչ ոք է, որ գնէ: Եւ մինչ փողով պտուղ հայցէի ի նոցանէ, պատասխանէին, թէ՛ Մուտ յայդին և ըստ ցանկութեան քում ժողովեալ գինչ և կամիս, կիւր, առ և զնայ վասն հոգւոց անկաղաց և նախնեաց մերոց, որք քրիստոնեայք էին: Ձի թէպէտ նախնիք նոցա ուրացեալ

<sup>60</sup> Շուրջալաւ – շուրջառով:

<sup>61</sup> Կողի – կարագ, յուղ (աե՛ս ՆՀԲ. 1836, էջ 1108):

<sup>62</sup> Բարբրգ – էրզրումի նահանգի Բաբերգ գավառի կենտրոնը:

<sup>63</sup> Իսպիր – Սպեր բերգաբաղաք ձորոխ գետի աջ ափին, Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում, հետագայում էրզրումի նահանգի համանուն գավառի կենտրոնը:

<sup>64</sup> Փեթագրագ – Բերգազրակ բերդ, ամրոց Մեծ Հայքի Տայք նահանգի Արայացիոր գավառում, Չորոխ գետի ձախ ափին, ԱՄՊ. էրզրումի նահանգի Բերգազրակ (Կիսկիմ) գավառակում:

<sup>65</sup> Բաթմ – Բաթում քաղաք Սև ծովի ափին, Աջարիայի մայրաքաղաքը:

<sup>66</sup> Նոնոն – իմա նոնքն:

էին, բայց հեղահոգի և հիւրասէր էին, նաև քաղաքավար. իբրև զքրիստոնեայս համբուրէին զաջ իմ, և տանէին ի տունս իւրեանց՝ ընթեռնուլ զԱւետարան ի վերայ հիւանդաց իւրեանց, զի հաւատային ի սուրբ Աւետարան: Ի ինչպիսիայ մինչև ցյԱրգուին յերիս առուրս գնացաք, և իջևանեցայ ի տան տէր Յովսէփին ի 5 հոկտ[եմբերի] 1776[թ.], որ և ընկալաւ զիս սիրով, նմանապէս և քաղաքացիքն...»:

ВАЖНЫЙ ИСТОЧНИК  
ОБ ИСЛАМИЗИРОВАННЫХ АРМЯНАХ

*СЕРГЕЙ ВАРДАНЯН*

Резюме

Истории армянского народа на протяжении веков сопутствовала борьба против иноземного ига, резни и насильственной исламизации. Особый интерес представляют исламизированные амшенские армяне, к которым еще в XIX в. проявлял интерес ряд армянских и зарубежных исследователей: Г. Инчичян, М. Бжшкян, немецкий ученый К. Кох, С. Айкуни, П. Тумаянц и другие. Этот перечень следовало бы начать с члена Венецианской конгрегации мхитаристов Погоса Мегеряна (1729–1814), который побывал в деревне Хевак Амшена еще в 1776 г. и в своих мемуарах "История жития..." приводит очень важные сведения. Хотя эти мемуары имеют для арменоведения исключительное значение, они до сих пор не публиковались. С целью ознакомления научных кругов представляем выдержки из мемуаров П. Мегеряна, имеющие исключительно важное значение для изучения истории исламизированных армян.

AN IMPORTANT SOURCE ABOUT ISLAMIZED ARMENIANS

*SERGEY VARDANYAN*

Summary

For many ages the history of Armenian people has been accompanied by struggle against the foreign yoke, massacre and violent islamization. A special interest is introduced to the islamized Hamshen-Armenians who as far back as in the 19th century were reverberated by Armenian and foreign scientists, such as: Gh. Inchichian, M. Bzhshkian, German scientist K.Kokh, S. Haykouni, P. Toumayants and others. This listing, perhaps, was to begin with the member of Mekhitarist Congregation of Venice Poghos Meherian (1729-1814) who was in Khevak village of Hamshen as far back as in 1776 and in his reminiscences «The Life Story...» gives very important information. Though the reminiscences have exceptional value for Armenology, they haven't been published up to now. For the purpose of putting it in scientific circulation, we fragmentarily introduce P. Meherian's reminiscences, having special importance for the study of the history of islamized Armenians.